# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԱ-09.06.01.28-1

ք. Երևան «26»«նոյեմբեր»2021թ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Հ. Նավասարդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի նոյեմբերի 5-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման արդյունքում ատեստավորում անցած և հավելավճար ստացող ուսուցիչների մասին» թիվ 1687-Ա հրամանը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պարտավորվում է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.06.01.«28. Ատեստավորման նոր համակարգի ներդրում՛ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կատարողին, իսկ Կատարողը ստանձնում պարտավորություն 2021 թվականի ընթացքում իրականացնել թվով 10 կամավոր ատեստավորված մանկավարժների հավելավճարների տրամադրումը՝ (այսուհետև՝ Աշխատանք):

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 1805400 (Մեկ միլիոն ութ հարյուր հինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն համաձայն Կատարողի կողմից ներկայացված հայտի կատարում է վճարում անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Պատվիրատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.2. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.4. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.5. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.6. Կատարողի կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված միջոցները վերադարձվում է Պատվիրատուին:

3.7. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.8 Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

**4. Կողմերի պատասխանատվությունը**

4.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատունսույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

**5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

5.1. Սույն պայմանագրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**6 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **Պ ա տ վ ի ր ա տ ու** | **Կ ա տ ա ր ո ղ** |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ք. Երևան, Կառավարական 2 շենք<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011022606<br>ՀՎՀՀ 02698732<br>Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող | «ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ<br>ք.Երևան, Ազատության պողոտա 2-րդ նրբ.հ.9<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900018001835<br>ՀՎՀՀ 00801524<br>Տնօրեն |
| _____ Վ. Գասպարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | _____ Հ. Նավասարդյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

Հավելված N 1
«26»«նոյեմբեր»2021թ կնքված
թիվ ԿԱ-09.06.01.28-1 պայմանագրի

## Ատեստավորված մանկավարժներին հավելավճարի հատկացման ցուցակ

| Հ/Հ | Անուն, Ազգանուն Հայրանուն | Հրամանի ամիս, ամսաթիվը և համարը | Առարկայի անվանում | Ընդամենը գումարը /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Ծատուրյան Հայկ Լևոնի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Ֆիզիկա | 104.1 |
| 2 | Առաքելյան Հովսեփ Մկրտիչի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Ֆիզիկա | 147.9 |
| 3 | Մխիթարյան Կառլեն Արշակի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Մաթեմատիկա | 152.1 |
| 4 | Զոհրանյան Ռոբերտ Սամսոնի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Ֆիզիկա | 210.9 |
| 5 | Միքայելյան Աղասի Սամվելի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Ֆիզիկա | 184.8 |
| 6 | Գասպարյան Կիրակոս Արմենակի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Մաթեմատիկա | 285.3 |
| 7 | Գրիգորյան Սուրեն Արշավիրի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Մաթեմատիկա | 178.5 |
| 8 | Պողոսյան Նիկիտա Բոգդանի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Մաթեմատիկա | 178.5 |
| 9 | Սարդարյան Տիգրան Հրաչյայի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Մաթեմատիկա | 184.8 |
| 10 | Վարդանյան Վարդան Ռազմիկի | 05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման | Մաթեմատիկա | 178.5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 1805.4 |

**Պ ա տ վ ի ր ա տ ու**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022606
ՀՎՀՀ 02698732
Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

_____ Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ ա տ ա ր ո ղ**
«ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ
ք.Երևան, Ազատության պողոտա 2-րդ նրբ.հ.9
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001835
ՀՎՀՀ 00801524
Տնօրեն

_____ Հ. Նավասարդյան
(ստորագրություն)
Կ.Տ